

**Մաթեմատիկա – դպրոցական փուլ**  
**6-րդ դասարան /տևությունը 150 րոպե/**

1. Գտնել արտահայտության արժեքը.  $33\frac{8}{15} \cdot \frac{9}{13} - 27\frac{7}{15} \cdot \frac{9}{13}$   
1)  $4\frac{1}{5}$       2)  $1\frac{2}{5}$       3)  $5\frac{2}{13}$       4) այլ պատասխան
2. Մի թվի 30%-ը մյուս թվի 15%-ից մեծ է 18-ով: Որքանո՞վ է առաջին թվի կրկնապատիկը մեծ երկրորդ թվից:  
1) 100      2) 180      3) 120      4) այլ պատասխան
3. Քանի՞ հատ երկնիչ թիվ կա, որոնցից յուրաքանչյուրի տասնավորը առանց մնացորդի բաժանվում է միավորին:  
1) 20      2) 22      3) 23      4) 25
4. 4, 9, 24, 69, . . , 609 թվերը գրված են ինչ-որ օրինաչափությամբ: Գտնել բաց թողնված թիվը:  
1) 189      2) 204      3) 269      4) այլ պատասխան
5. Քանի՞ զույգ բաժանարար ունի 120-ը:  
1) 10      2) 12      3) 14      4) 16
6. Քանի՞ եղանակով է հնարավոր 10000-անոց թղթադրամը մանրել 1000, 2000 և 5000 արժողությամբ թղթադրամների միջոցով:  
1) 8      2) 9      3) 10      4) 12
7. Չորս ընկերներ մասնակցել են վազքի մրցույթին: Այն հարցին, թե ո՞վ որ տեղն է գրավել, նրանք պատասխանեցին.  
Արմեն- Ես երկրորդն էի, իսկ Բագրատը՝ երրորդը,  
Գևորգ- Ես երրորդն էի, իսկ Արմենը՝ առաջինը,  
Դավիթ- Ես երրորդն էի, իսկ Բագրատը՝ չորրորդը:  
Մարգիկներից ո՞վ է գրավել առաջին տեղը, եթե հայտնի է, որ նրանցից յուրաքանչյուրի ասածներից մեկը ճիշտ է, մյուսը՝ սխալ:  
1) Արմեն      2) Բագրատ      3) Գևորգ      4) Դավիթ
8. Մի անգամ Արամը նկատեց, որ եթե ընթացիք շաբաթվա բոլոր օրերի ամսաթվերը գումարի, ապա կստանա 105: Շաբաթվա ի՞նչ օր էր այդ ամսվա 1-ը:  
1) երեքշաբթի      2) հինգշաբթի      3) շաբաթ      4) հնարավոր չէ որոշել
9. Բ՞նչ մնացորդ կստացվի, եթե  $2 \cdot 4 \cdot 6 \cdot \dots \cdot 2016 \cdot 2018$  արտադրյալը բաժանենք 2019-ի:  
1) 0      2) 2      3) 2018      4) այլ պատասխան
10. Ուղղանկյան մակերեսը 50 սմ<sup>2</sup> է: Նրա կողմերի երկարությունները բնական թվեր են: Նշվածներից, ո՞րը չի կարող լինել տրված ուղղանկյան պարագիծը:  
1) 30սմ      2) 32սմ      3) 54սմ      4) 102սմ
11. Արկղի մեջ կան 8 կարմիր, 5 կանաչ և 10 դեղին խնձոր, ինչպես նաև 6 կարմիր, 7 կանաչ և 9 դեղին տանձ: Նարեկը արկղի միջից մեկ առ մեկ պատահական կերպով հանում է մրգերը: Ամենաքիչը քանի՞ միրգ պետք է հանի Նարեկը, որպեսզի վստահ լինի, որ կունենա նույն գույնի առնվազն մեկ խնձոր և մեկ տանձ:  
1) 22      2) 24      3) 26      4) այլ պատասխան

12. Զինվորների շարասյունը շարժվում է  $4\frac{1}{2}$  կմ/ժ արագությամբ: Քանի՞ րոպե կձախսի շարասյունն ուղեկցող սպան շարասյան վերջնամասից նրա առաջնամասը գնալու և վերադառնալու համար, եթե շարասյան երկարությունը 350 մ է, իսկ սպայի արագությունը՝ 6 կմ/ժ:

- 1) 7      2) 14      3) 16      4) 28

13.  $AB=42$  սմ հատվածի վրա վերցրված է  $C$  կետն այնպես, որ  $AC$  հատվածի  $\frac{1}{3}$  մասը հավասար է  $BC$  հատվածի  $\frac{1}{4}$  մասին: Գտնել  $C$  կետի և  $AB$  հատվածի միջնակետի հեռավորությունը:

- 1) 1 սմ      2) 2 սմ      3) 3 սմ      4) 4 սմ

14. 9 ձիերին 5 օր կերակրելու համար 900 կգ խոտ է հարկավոր: 4 ձի 1 շաբաթ կերակրելու համար քանի՞ կգ խոտ է հարկավոր:

- 1) 560      2) 720      3) 700      4) 400

15. 6781253 թվից ջնջել հնարավորինս քիչ թվանշաններ այնպես, որ ստացված թիվը բաժանվի 36-ի: Գտնել ջնջած թվանշանների գումարը:

- 1) 14      2) 15      3) 16      4) 17

16. Հայաստանի ֆուտբոլի առաջնությանը մասնակցում է 8 թիմ: Նրանցից յուրաքանչյուրը մյուսների հետ խաղում է չորսական խաղ: Ընդամենը քանի՞ խաղ է կայանալու այդ առաջնությանը:

17. Երբ ռեստորանը առաջին օրը օգտագործեց ստացած արկղում եղած լիմոնների  $\frac{1}{3}$  մասը և  $\frac{1}{3}$  լիմոն, իսկ երկրորդ օրը մնացածի  $\frac{1}{2}$  մասը և  $\frac{1}{2}$  լիմոն, ապա արկղում մնաց 7 լիմոն: Սկզբում քանի՞ լիմոն կար արկղում:

18. 1 դմ կողով 27 խորանարդիկներից Դավիթը հավաքեց 3 դմ կող ունեցող խորանարդ: Ստացված խորանարդի բոլոր նիստերը նա ներկեց կարմիր գույնով՝ օգտագործելով 108գ ներկ: Հաջորդ օրը նա առանձնացրեց խորանարդիկները և ներկեց նրանց բոլոր չներկված նիստերը: Քանի՞ գրամ ներկ օգտագործեց Դավիթը երկրորդ օրը:

19. Եթե եռանիշ թվին ձախից կցագրենք 5 թվանշանը, ապա կստանանք 3 անգամ ավելի մեծ թիվ, քան աջից 4 կցագրելիս: Գտեք սկզբնական թիվը:

20. Եռանիշ թիվը 9-ի և 11-ի բաժանելիս ստացվում են միևնույն 2 մնացորդ, իսկ 10-ի բաժանելիս ստացվում է 7 մնացորդ: Գտնել այդ եռանիշ թիվը: